ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Մեդ Քեփիթլ» ՍՊԸ -ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/67 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	HUIDAMED	A700 Cranial Stabilization System	CHANGZHOU HUIDA MEDICAL INSTRUMENT CO.,LTD	Համակարգը նախատեսված է նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ հիվանդի գլխի կոշտ ֆիքսացիայի, ինչպես նաև վիրաբուժական միջամտությունների ժամանակ գլուխը տարբեր հարթություններում դիրքավորելու համար: Համակարգը պետք է նախտեսված լինի նյարդավիրաբուժական միջամտությունների համար և ապահովի գանգի կայուն եռակետային ամրացում: Համակարգի հիմնական կառուցվածքային տարրերը պետք է պատրաստված լինեն կարծրացված մակերեսով ալյումինե համաձուլվածքից:Համակարգը պետք է ներառի՝ Գանգային ֆիքսատոր (Head Clamp) – 1 հատ, Ֆիքսացիոն թև՝ մանկական (Rocker Arm - Pediatric) - 1 հատ, Վիրահատական սեղանին ամրացման հիմք (Base Unit) - 1 հատ, Դիրքավորման ադապտեր (Swivel

				Adapter) - 1 հատ, Գելային գլխադիր (Gel Pad Headrest) – 1 հատ, Վիրահատական սեղանի ադապտեր (Table Adaptor) - 1 հատ, Գանգի կոշտ ֆիքսացիայի մեծահասակների պիների հավաքածու (Adult Skull Pin) - 3 հատ, Գանգի կոշտ ֆիքսացիայի մանկական պիների հավաքածու (Pediatric Skull Pin) - 3 հատ, Գանգի ոչ ինվազիվ (փափուկ) ֆիքսացիայի հավաքածու - 1 հատ։ Համակարգը պետք է ապահովի գլխի դիրքի ճշգրիտ կարգավորում՝ հորիզոնական հարթությունում առնվազն 360° և ուղղահայաց հարթությունում առնվազն 270° պտտման հնարավորությամբ։ Համակարգը պետք է ապահովի հիվանդի գլխի ֆիքսացիա պառկած մեջքի վրա (supine), փորի վրա (prone) և կողքի (lateral) դիրքերում։ Համակարգի բաղադրիչները պետք է համատեղելի լինեն DORO և Mayfield համակարգերի հետ, ինչպես նաև այլ համակարգերի, որոնք համապատասխանում են նույն տեխնիկական և ֆունկցիոնալ պահանջներին։ Համակարգը պետք է ապահովի գանգի դիրքի արագ ֆիքսում և ազատում, ինչպես նաև հնարավորություն տա միացնել լրացուցիչ նյարդավիրաբուժական ռետրակտորային համակարգեր՝ ինտեգրված ամրացման ուղեցույցների միջոցով։Համակարգը պետք է ունենա առնվազն 140 մմ աշխատանքային խորություն։ Համակարգը պետք է հագեցած լինի ֆիքսացիոն ուժի վերահսկման մեխանիզմով՝ տեսանելի ցուցիչով, իսկ առավելագույն ֆիքսացիոն ուժը պետք է կազմի առնվազն 360 Ն 0,3% շեղումով։ Համակարգը պետք է ունենա լայնության կարգավորման հնարավորություն առնվազն 12–24 սմ

				միջակայքում: Բոլոր բաղադրիչները պետք է ենթակա լինեն բազմակի ստերիլիզացման ավտոկլավավորման եղանակով, իսկ ֆիքսման համակարգը պետք է ունենա արագ արձակման և արագ բլոկավորման մեխանիզմ՝ բացառելով ինքնաբերական տեղաշարժը վիրահատության ընթացքում: Արտադրանքը պետք է պետք է համապատասխանի (EU) 2017/745 MDR պահանջներին և ունենա Եվրոպական ստանդարտներին համապատասխան(CE) սերտիֆիկատ: Արտադրողը պետք է ունենա գործող ISO 13485:2016 որակի կառավարման համակարգի հավաստագիր: Համակարգը պետք է մատակարարվի շահագործման ուղեցույցով: Երաշխիքային ժամկետը պետք է լինի առնվազն 24 ամիս: Սարքավորումը պետք է լինի նոր, նախկինում չօգտագործված:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО <<Мед Кепитл>> в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/67 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	марка	наименование производителя	технические характеристики
1	HUIDAMED	A700 Cranial Stabilization System	CHANGZHOU HUIDA MEDICAL INSTRUMENT CO.,LTD	